

ՆԵՐՍԻՍԻԱՆԵՐԻՆԻ ՏՈՒՐ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին կամարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրքով և միմիայն խմբագրատան մէջ.

Թիֆլիս. Тифлисъ, Редакция «Мелік».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ Ե Գ Կ № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիտով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանակը տողաւորով 10 կոպէկով.

Տ է Լ Ե Գ Կ № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՒԱՆԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Բաղադրական տեսութիւն.—ՆԵՐՍԻՍԻԱՆԵՐԻՆԻ ՏՈՒՐ
Թիֆլիս. Մասնագործութիւն. Նամակ Երևանից,
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ինչ
է կատարվում Մակեդոնիայում. Արաբիայի լու-
րեր.—ԵՄԱՐԻ ԼՈՒՐԵՐ.—Մանրանկար.—ՀԵՆՐԻ-
ԳԻՐԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Դէպի Արաբաւ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բաղադրական աշխարհում մի հարց յու-
զում էր հասարակութեան մտքերը վերջին
ժամանակները: Արդեօք ժամանակը չէ՞ մի
նոր վեհաժողով կամ միջազգային խոր-
հրդակցութիւն հրաւիրելու, որպէս զի
նորից ընտելեան առնվին այն քաղաքա-
կան կնճռոտ հարցերը, որոնք թէև նա-
խատեսված են եղած դաշնագրերով,
բայց գործնականապէս դրական լուծում
չեն ստացել:

Արդարեւ թէև գոյութիւն ունի Բերլինի
դաշնագրերը, բայց Թիւրքիայի քրիստոնեա-
ներին ապահովութիւն ընծայող յոգևած-
ները մինչև այժմ մնացել են չիրագործ-
ված: Մակեդոնական հարցը նորից ապա-
րէզ հանց Թիւրքիայի մէջ տիրող իրա-
կանութեան ծանրութիւնը և ցոյց տուեց.
որ Բերլինի դաշնագրի թելադրած բարե-
նորոգումները շատ հեռու են իրանց
իրագործման հաւանականութիւնից: Նոյ-
նը ցոյց տուին մի քանի տարի օրանից
առաջ Փոքր-Ասիայի և յունական սահմա-
նագծի մօտ տեղի ունեցած սոսկալի
դէպքերը: Բերլինի դաշնագրերը, որ քան-
սինք տարի գոյութիւն ունի, մնացել է
մեռած տառ և ոչ միայն չէ բարեփոխել
Թիւրքական իրականութիւնը, այլ տեղ-
տեղ աւելի վատթարացրել է նրան և
յուսահատական վիճակի մէջ դրել ազգա-
քանակութիւնը: Հասկանալի է, որ հարց է
ծագում, թէ գուցէ նպատակաւորաբար կը
լինի նոր միջազգային խորհրդակցութիւն
հրաւիրել և այնտեղ պարզել, թէ ի՞նչ
միջոցներով կարելի է յարգել տալ և
իրագործել դաշնագրերի որոշումները,
որովհետև հակառակ դէպքում դաշնագրե-
րը դառնում են միայն մի ձևականու-
թիւն, մի դիմակ, որոնք ժամանակաւո-
րապէս ապաւորութիւն են գործում, բայց
իրապէս չեն նպատակում միջազգային
կնճռոտների զրոյակն լուծման:

Անկասկած, իւրաքանչիւր մարդ տալիս

է այդ հարցը ինքն իրան և շատ բնական
է համարում, որ վերջապէս գտնվին մի-
ջոցներ լուծելու ասպարէզ եկած կնճռոտ
խնդիրները: Սակայն իրաւացի է և այն
հարցը, թէ արդեօք նոր խորհրդակցու-
թիւնը չի՞ լինի դարձեալ մէկը այն խոր-
հրդակցութիւններից, որոնք եղել են
անցեալում և չեն կատարել ոչ մի դրական
դեր գործնական կեանքի մէջ:

Որպէս զի մի նոր խորհրդակցութիւն
կարողանայ էական գործ կատարել, կա-
րել է, որ խորհրդակցութեան միջոց
յղացողները և խորհրդակցութեան մէջ
մասնակցողները բաւականաչափ համակո-
րինեն ընկնող խնդիրների գործնական
լուծման անհրաժեշտութեան գաղափարով
և հեղինակութիւն ունենան իրանց ձայնը
յետեղել տալու և իրանց որոշումները
իրապէս կատարել տալու: Դժբաղդաբար
եւրոպական պետութիւնները զանազան
շարժառիթներով անկարող են ներկայումս
իրանց ազդեցութիւնը դարձնել հեղինա-
կաւոր և այդ պատճառով թոյլ են վարժել
եղած դաշնագրերի իրագործութեան
վերաբերութեամբ և առանձին նշանակու-
թիւն չեն տալիս նոր խորհրդակցութեան:

Մակեդոնական հարցը ոչ միայն մակե-
դոնացիների հարց է, այլ և շատ շահ-
գրգռված կողմերի: Աւստրիան, Իտալիան,
Ռուսաստանը, ինքը Թիւրքիան, Անգլիան,
Ճապոնիան, Գերմանիան էական շահեր
ունեն, կապված Մակեդոնիայի և Բալկա-
նեան թերակղզու քաղաքական վիճակի
հետ: Այլ ևս չեն խօսում այն բանի մա-
սին, որ Մակեդոնիայում հինգ տարի մա-
քառում են միմեանց դէմ, այն է Թիւրքը,
բոլգարը, սերբը, յոյնը, և ռումիլը, և
սրանցից իւրաքանչիւրը յատուկ հակում
ունի դէպի շրջապատող քաղաքական կազ-
մակերպութիւնների դէպի Թիւրքիան,
Բոլգարիան, Սերբիան և Ռուսաստանը:
Այդ պետութիւններից իւրա-
քանչիւրը ցանկութիւն ունի ծառայելու
իր նպատակներին Մակեդոնիան, իբրև
աշխարհագրական մարմին, և մակեդոնա-
ցիներին, իբրև ազգաբնակչութիւն: Այդ
հանգամանքը ստեղծում է մի ողորդա-
կան գրգռութիւն, որին մենք ականատես
ենք ներկայումս: Այն ժամանակ, երբ եր-
կիրը յուզված է և բոլգար ազգաբնակչու-
թիւնը ապստամբական դրօշակ է բարձ-
րացրել, յոյները, ռումիլները և մասամբ
սերբերը ոչ միայն ստան զինք են բռնել

դէպի ապստամբված ժողովուրդը, այլ եր-
բեմն նոյն իսկ նրանց հակառակն են
գործում: Թուլացնելով կուսողների ոյժը,
Արաբիան և ներքին հանգամանքները
աննպաստ վիճակ են ստեղծել Մակեդոնիայի
համար: Կարող է՞ արդեօք օգնել նոր
միջազգային խորհրդակցութիւնը: Հազիւ
թէ:

ՆԵՐՍԻՍԻԱՆԵՐԻՆԻ ՏՈՒՐ

Մ Ա Տ Ն Ե Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

ԵՐԼԷՐ, քանտոնը—Իդալիստ, պատկերազարդ,
գրեք դոկ. Ի. Ս. Քառայան, Ս. Պետրոսով 1903 թ.
հատոր I և II

Անա դարձեալ մի շքեղ և ճշգրտութեամբ
հրատարակութիւն, որ գալիս է ճոխացնելու
հայ գրականութիւնը և մի և նոյն ժամանակ
ցոյց տալու, թէ գեղարուեստական ազգաբու-
թեան պահանջը հայերի մէջ ևս սկսում է դար-
գանալ: Թուլթը ընտրել, պատկերները շքեղ և
գեղեցիկ, ազգագրութիւնը՝ անբիծ և խնամքով
կատարված, մի խօսքով գրել արտաքին հա-
ձելի և քաղցր ապաւորութիւն է թողնում և
պատիւ է բերում թէ հրատարակչին և թէ Պե-
տրոսովի հայկական արագաձայն ազգաբնակչու-
թեանը:

Սակայն գրեքը հրատարակված չէ միայն
դաշինների գործ կազմելու համար, նա ան-
մտկամ է և հայ ընդհանուր հասարակութեան
ընթերցանութեան լաւ և ապագայար անունը
հայթայթելու, և մարդութեան հանձնարարից
մէկը, բանաստեղծ Երվանդի կեանքի և նրա
գրական-բանաստեղծական-իդէալական գործու-
նեցութեան հետ հիմնադրած ծանօթացնելու հա-
մար:

Այդպէս է իր այդ նպատակի մէջ հեղինակը.
տոնել է նա այն պաշտօնը, որ բաւական է ա-
ռաջագրած նպատակը իրագործելու: Նպատա-
կալարմար է այն ձևը, որ ընտրել է հեղինակը
իր գիտաւարութիւնը իրագործելու համար: Այդ
կէտերի մտաւր կը ցանկայինք մեր կարծիքը
յայտնել:

Արդ պէտք է իմանալ, որ պ. Քառայան
տալիս է մեզ ոչ թէ Երվանդի գործերը, այսինքն
նրա երկարաթիւնութիւնների թարգմանութիւնը,
ոտոմաւոր կամ տրգմ., այլ տալիս է մեզ իր
հեղինակութիւնը: Երվանդի մտաւր Մենք ծանո-
թանում ենք գերմանացի հանձնարար բանա-
ստեղծի հետ ոչ թէ անմիջապէս, նրա ստեղ-
ծագործական մտքի արտապրութիւնների ան-
միջական ընթերցմամբ, այլ մենք ծանօթա-
նում ենք այդ արտապրութիւնների հետ պ.

Քառայանից: Երկրորդ անգամ պատմութիւն հիման
վրա: Տարբերութիւնը, անկասկած, առաջին է,
որովհետև համաձայնեցէ, որ աւելի հաճելի է
խմել ջուրը բուն աղբիւրից, քան ուրիշ ձեռքով
բերված խողովակից: Եւ գիտեմ, որ պ. Քառա-
յանից ընտրած ձևը յամախ գործ է անվում.
ես գիտեմ, որ պ. Քառայան իր գործը պատ-
րաստել է՝ ձեռքի տակ ունենալով եւրոպական
և զխաւաքապէս գերմանական գրականու-
թեան մէջ լայն տեսած նշանաւոր գրականները
Երվանդի կեանքի և բանաստեղծութեան վերա-
բերեալ, բայց, ինչպէս նա ինքն է խոստովանում,
առաջաբանի մէջ, նա չօգտվել է այդ բոլորից
միանգամայն ազաւ և ինքնուրույն կերպով և
«ես բան կատարեալապէս փոխել է իր մեկի և
հաւանի համաձայն: Ուրեմն Երվանդի ստեղծա-
գործութեան հետ մենք ծանօթանում ենք պ.
Քառայանից լուսաբանութեամբ: Եւ վկայում
ենք, որ պ. Քառայան աշխատել է բարեխնու-
թեամբ կատարել իր օտանձնած պաշտօնը,
համարէն ուսումնասիրել է իր ներքը, թէև
զուգի է յիշատակել այն աղբիւրները, որոնցից
զուգի է իր ներքը, մինչ զեւ արագաբութիւնը
պահանջում էր այդ անել, բայց հայ գրակա-
նութիւնը, անյուշտ, աւելի ճոխացած կը լինէր,
եթէ այդպիսի շքեղ հրատարակութեամբ ու-
նենայինք Երվանդի բուն գործերի թարգմանու-
թիւնը: Այլ բան է հրճուել նկարչի իսկական
նկարով, այլ բան է հրճուել այդ պատկերի
նկարագրութեամբ: Երվանդի բերանով:

Մեր նպատակը չէ՞ ամենին նամանակն պ.
Քառայանից գործի արժէքը. մենք կը կամե-
նայինք միայն յորդորել նրան, որ ապագայում
նա աշխատէ ամէկ եւրոպական նշանաւոր
գրողների թարգմանութիւնը, քանի որ, ինչ-
պէս կարելի է եւրոպացիներ նրա օտանձնելու,
նա մտադիր է նուրիւր իրան այդ գործին:
Թարգմանութեան հետ, ի հարկէ, կարելի է
կցել գրողների կենսագրութիւնը:

Ձեռք կարող և մի նկատողութիւն չանել պ.
Քառայանից: Մենք շատ ցաւում ենք, որ
նա ևս հետեւել է մեր գրողների մի աղբիւր տո-
մարութեան, երբ նրանք, հրատարակելով որ և
է հեղինակութիւն կամ թարգմանութիւն, ան-
պատճառ աշխատում են ցոյց տալ, որ իրան-
ցից առաջ հայ գրականութիւնը անապատ է
եղել: Եթէ հաւատարմաբար, Քառայանից, Երվա-
նդի, Գեօտիկ, Հրէպոյ, Երվանդի, Երվանդի
հեղինակների գրականները մեր մէջ գո-
յութիւն չունեն կամ թարգմանված են վատ
լեզուով: Միթէ, Իսկ Գ. Բարսիւղաբեկի
թարգմանութիւնները, իսկ Մանուկեանի Շէք-
սպիրի թարգմանութիւնները, միթէ արդարու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Դ Ե Գ Ի Ա Ր Ա Տ

XIV

Կտորը օլանում է և մենք արագութեամբ
հետանում ենք Ղամարուլուի դէպի Մասիսի սառ-
րուտը: Ծանապարհը երկու կայարաններ—
Ղամարուլու և Արալուլու—մէջ մի առանձին հե-
տաքերութիւն չէ ներկայացնում: Ջրեղ բու-
սանկանութիւնը, որով մենք անընդհատ զուար-
ճանում էինք Երևանից սկսած մինչև Ղամարու-
լու, վերջանում է. սկսվում են նորից ախուր,
ամայի դաշտեր՝ անգլաւոր ծածկված ցածր,
գետերի երեսին փոխված միմեան թփերով:
Միակ հետաքերական բանը այդ ճանապար-
հին Արալուլու է, որին և շուտով հասնում ենք
մենք:

Առաջին անգամ էր, որ ես տեսնում էի
մայր-Արալուլու Մինչ երկաթեայ նաւակներից
բաղկացած պարօմը կը տեղափոխէր մեր
կտորը: Գետի մի ափից դէպի միւսը ես
կանգնած էի աշտով, ընկերներիցս հետո, Ա-
րալուլու ցածրադիր եղբայրն է լուսնաւոր էի
նրա հարկ-հաւատար հայելուն, նրա պարզ,
մաքուր ջրերին: Կամայ-կամայ, առանց շտա-
պելու, առանց մի շուկ անգամ հանելու

անցնում էին այդ ջրերն իմ առաջից՝ որոճա-
լով իրանց ախուր մտածմունքները: Բանա-
տեղծի նման ես ոչ մի կարգ չը տուի Արալու-
լու. ես չը հարցրի նրան, թէ ինչու նա չէր
կանգնում կտոր չէ բանում մանկական, ինչու
չգտնում էր, ինչու չարցունք ցայտում են
նրա աչք, հայտար անբերք. ես խորհուրդ չը
տուի նրան խալալալու հոտով դէպի ծովը: Առանց
հարցրելու ես զգում էի նրա պատասխանը. զգում
էի իմ ամբողջ հոգով հարկերի դեպի անփա-
րատ վիշտը, նրա դարաւոր խոհերի դառնու-
թիւնը, նրա անմխիթար օտգն ու անմոռնի
լուսնութիւնը: Եւ զգում էի, որ նա չէ կարող
խալալալու, նա շատ լաւ գիտէ, որ խալալա-
լու ոչ մի բան չունի հայրը: Լնց, արտա-
ուրի, հայրերի գետ, դրանից աւելի զեւ
օգտփանց չը կայ թեղ համար. ահա և ես գը-
լուրում եմ մի զարթի ջր վճիւր ջրերից մէջ—
Թող իրար հետ խառնվին մեր արտասուքը:
Կը գայ մի օր և մենք կը ժպտանք ու կը խա-
տանք իրար հետ...

Ինչ կանչեցին, պարօմը վերջին անգամ անց-
նում էր գետի հանդիպակալ ափը. հարկաւոր
էր շտապել. ես անցայ այն տնակի առաջից,
ուր ապրում են պարօմի վրա աշխատող
բանուորները: Տեսնել հիւսիսային կողմում,
օտուերի մէջ, ուղիղ Արալուլու ափին, չոքել
էր մի պարսիկ և կատարում էր իր նա-

մաքը: Ջրմուռանց ծերունու բարի դէմքը հս-
գական էքսպրես էր արտայայտում: Խորատու-
ված որտառուղի աղօթքի մէջ նա չը նկատեց
իմ ներկայութիւնը: Ափերի մօտ կը կանգ-
նի նստաղը կատարէ թուրը կամ պարսիկ
հոտած—անցած իսկայն իմ մտքից «Հոտած»
էր արդեօք այդ պարսիկը, թէ ոչ—չը գիտեմ,
հաւանական է նոյնպէս հոտած, որքան և ա-
մեն մէկը մեզմէս.—բայց ինչ էլ որ լի-
նէր, ես ակամայ ժպտացի այս զմահածոյթի
վրա:

Արալուլու թիւրքաբնակ գիւղում, որ ընդա-
մենը 10—12 վերտո հետո և Ղամարուլուից,
արշաւախմբի անդամներին դիմաւորեց տեղա-
կան օտարիկանական գրիտաւոր. նա ամեն ինչ
վարդօք պատրաստել էր մեր ճանապարհոր-
դութիւնը դիմաւորելու համար,—գտել էր ա-
ռաջնորդներ, նշանակել էր զինելովով ևս պա-
հապաններ, վարձել էր ձիեր, բերել էր տուել
ուղտերի մի ամբողջ կարաւան՝ մեր ծանրացքը
տեղափոխելու դէպի Սարգար-Թուլուլու: Ի հար-
կէ, այս ամենը կատարված էր ոչ ի պատիւ
իմ նաւատար... եւ միայն չանվում էի ուրիշ-
ների ընկերակցութիւնից:

Արալուլուում չը կայ պատմային կայարան. մենք
թիւրքներ էինք գիւղական դատարանի շինու-
թեան մէջ. նրա ընդարձակ գաւաթը մեզ համար
մի անոտվոր խայտաճամուկ—գեղատեսիլ պատ-

կեր էր ներկայացնում: Գիւղը, թուրք, պար-
սիկ իրանց աղապիսի տարադիրով խառնվել
էին իրար՝ ձիերի և ուղտերի մօտ. ամենքը
խօսում էին բարձր-բարձր իրանց լեզուով,
ամենքը միասին աղաղակում էին և այդ ընդ-
հանուր աղաղակի մէջ ամենից աւելի բարձր,
ամենից աւելի որոշ լուծում էր ջրղական կայտ,
գոհակահնչիւն, լեռնային լեզուն, որով, երեք,
անհնար է խօսել ցածրաձայն:

Մի-երկու ժամ Արալուլուում հանգստանալուց
և ճաշելուց յետո՞ մենք ձի հեծանք և գիւղի
ծուռ ու մուռ, փոշոտ փողոցներն անցնելով՝
ուղղեցինք մեր ընթացքը դէպի արեւմուտը,
ուղիղ դէպի Մասիսի սարերը:

Նեղ, աւաղուտ ճանապարհով, երկար ու
ձիւճ ձի ձիւռ ետեից-յարժամ՝ առաջ էր գնում
մեր խայտաճամուկ կարաւանը. ամենից ա-
ռաջ գնում էր իր պարսկական արագալուս փոք-
րիկ ձիւն վրա ջրղական Արալուլու գիւղական
Հասուն, մեր առաջնորդը—մի կրակուտ 60—65-
ամեայ ծերունի, որ չը նայելով իր տարիքին
չուտ-չուտ վայր էր դալիս ու նորից թռչում
ձիւն վրա այնպիսի թեթեւութեամբ, որ մենք,
լիակնիւր, միայն նախանձվել կարող էինք
նրան: Մերունի Հասուն ամեն ջալափոխում
ամայնցնում էր մեզ երբեմն մէկին, երբեմն
միւսին զանազան ծառայութիւններ մատու-
ցանելով: Հարազատ զաւակ լեռների՝ նա իր

խաճ
 են է
 ւից
 մայ
 իսկ
 առ
 29,0
 ել
 ցին
 դաք
 ւել
 կան
 կան
 գիրծ
 «Է
 բուր
 գրին
 է Յո
 ար
 առ
 է Ա
 սուչ
 «Է
 օրեր
 պար
 Ծ
 որ Գ
 գիւհ
 է բո
 տեղ
 գրիւ
 կնք
 այդ
 բով
 տես
 որպէ
 մաս

 Ի
 Սո
 նբը
 էր գ
 ծանխ
 ու գ
 նտա
 մուն
 Դա
 Զար
 հեզն
 —
 մեկ
 Ն
 մեկ
 իրա
 աւել
 Թիւ
 Զին
 երկ
 փոք
 կոմ
 այժ
 հար
 «Է
 են,
 ամեն
 արե
 արե
 թիւ
 հրդ
 թիւ
 ճշգ
 համ
 Կ
 լաւ
 նշան
 պատ
 մետ
 նից
 Զօյ
 Զաթ
 Հաւ
 Վիւ
 բով
 նու
 Եւ
 բու
 անը

Электронпечатня Грив. Изд. Т—на. В. Вачваская и.